ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/46

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Խաչատուրյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական, N 03Ա052727)

Ներկայացուցիչ՝ Տ. Նաղդալյանի (լիազորագիր, տրված՝ 01.07.2019թ.)

Էջմիածնի համանքապետարանի «Բարեկարգում» տնօրինության ներկայացուցիչ՝

Գ. Հարությունյանի (լիազորագիր, տրված՝ 04.07.2019թ.)

քննելով Էջմիածնի համանքապետարանի «Բարեկարգում» տնօրինության կարիքների համար էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 28.06.2019թ. ներկայացված (28.06.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/46 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 28.06.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության կարիքների համար՝ էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերումը (հետայսու՝ նաև աշխատանք), որոնք խմբավորված են 1 չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	*էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման աշխատանքներ*

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4 կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Կռազ		
Գրեյդեր		
Գլդոն		
Ասֆալտփռիչ		
Ֆռեզ		

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.12 ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը հետևյալն են՝

ա) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը.

բ) իր կողմից հաստատված այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ՝ համաձայն հավելված N 5.1-ի: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է նաև դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները .

դ) իր կողմից հաստատված տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին՝ համաձայն հավելված N 5.2-ի: Նշված տեղեկանքին կցվում են նաև հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

3.2 Հայտում ներառվող՝ դիպլոմների պատճենները, տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով, եթե դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած չեն ճանաչվել (համարվել):

Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն ստացել է ծանուցում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ: Որից հետո Ընկերության կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում նաև՝ 25 մարտի 2019թ. թիվ 1/Վ/2018 վարձակալության պայմանագրի պատճեն, ինչպես նաև Ֆրեզ/Բեռնիչ-NEW HOLLAND L225 տեխնիկական միջոցի վերաբերյալ թիվ 0001558 տեխնիկական վկայագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության.

«1.2 կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցում էր ուղարկվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերի պահանջի վերաբերյալ: Սահմանված ժամկետում և սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել է որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը:

1.2.1 կետի համաձայն՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում «Ֆրեզ» /Բեռնիչ-NEW HOLLAND L225,2014թ./-ի համար իրավունքի տեսակը նշվել է վարձակալություն, սակայն տրանսպորտային միջոցի վարձակալության 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետի նշված է, որ տրանսպորտային միջոցը վարձատուին պատկանում է սեփականության իրավունքով: Սակայն չի ներկայացվել վարձատուին պատկանող Ֆրեզ/ Բեռնիչ-NEW HOLLAND L225/ սեփականության վկայագիրը: Միևնույն ժամանակ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից նշված տեխնիկական միջոցի վերաբերյալ ներկայացվել է թիվ 0001558 տեխնիկական վկայագիրը, ըստ որի, որպես սեփականատեր նշված է «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՓԲԸ-ն:

1.2.2 կետի համաձայն՝ բացակայում է հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների աշխատանքային փորձի ժամանակահատվածը հիմնավորող փաստաթղթերը /աշխատանքնային գրքույկների պատճենները/:

2.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է էլեկտրոնային եղանակով ծանուցել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին նշված անհամապատասխանությունների վերաբերյալ:

2.2 կետի համաձայն՝ Կարգի 47-րդ կետի համաձայն որոշվել է առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել վարձատուին պատկանող Ֆրեզ/ Բեռնիչ-NEW HOLLAND L225/ սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու իրավունքի վերաբերյալ փաստաթուղթ, ինչպես նաև հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների աշխատանքային փորձի ժամանակահատվածը հիմնավորող փաստաթղթերը /աշխատանքային գրքույկների կրկնօրինակները/:»

Վերոհիշյալ որոշման հիման վրա «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին գնահատող հանձնաժողովի կողմից 04.06.2019, ժամը՝ 13:08-ին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանութ-յունները հրավերի պահանջների նկատմամբ:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում, այն է՝ մեկ աշխատանքային օրում, շտկվել են ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես.

1. 05.06.2019թ. ժամը 11:58-ին (արտատպումը կցվում է) ներկայացվել է շտկված թիվ 5.1 Հավելվածը, որտեղ Հրավերով պահանջված «Ֆրեզ» տեխնիկական միջոցը ներկայացվել է որպես վարձակալության իրավունքով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին պատկանող գույք: Վերոհիշյալին նույն նամակով կցվել է 01.05.2019թ. «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիրը, որի համաձայն «Սահակյան Շին» ՍՊԸ-ն վարձակալությամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին հանձնել է Ֆրեզ՝ բեռնիչ- Bobcat S 850 տրանսպորտային միջոցը: Վերոհիշյալին կցվել է նաև «Սահակյան Շին» ՍՊԸ-ին պատկանող նշված տեխնիկական միջոցի վերաբերյալ է թիվ 0001499 տեխնիկական վկայագիրը:

2. 05.06.2019թ. ժամը 12:06 ներկայացվել է տեղեկանք կնքվելիք պայմանագրի համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին, որտեղ նշված մասնագետների

հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի /դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն/ պատճենները: Ներկայացվել է նաև կնքվելիք պայմանագրի համար առաջարկվող հիմնական աշխատակազմի աշխատանքային գրքույկների պատճենները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության.

«1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. թիվ 2 արձանագրությամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել է կնքվելիք պայամանագրի կատարման համար տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում առկա անհամապատասխանությունը, սակայն մասնակցի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվել տրանսպորտային միջոցի վարձակալության 25 մարտի 2019թ. Թիվ 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետում նշված Ֆրեգ/ Բեռնիչ-NEW HOLLAND L225/ սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու իրավունքի վերաբերյալ փաստաթուղթը՝ չապահովելով Կարգի 62-րդ կետով սահմանված «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին ներկայացվող պահանջները:

2-րդ կետի համաձայն՝ նույն արձանագրության 1.1 կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:»

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին ոչ իրավաչափ որոշումը բողոքարկվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ ստանալով ԳԲՔԱ-ՆԳ-2019/39 ծածկագիրը: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը 20.06.2019թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/39 ծածկագրով բողոքի վերաբերյալ կայացրած որոշմամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մասնակի բավարարել է, ըստ որի պարտավորեցվել է «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը կատարել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից կայացրած որոշումը՝ սակայն այս անգամ էլ գնահատող հանձնաժողովի 24.06.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշմամբ որոշվել է մերժել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը հետևյալ հիմնավորմամբ՝

«ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն ՀՀ կառավարության 04.05.2019թ. թիվ 526-Ն որոշման 47-րդ կետի, 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին առաջարկվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել կնքվելիք պայմանագրի կատարման համար տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում առկա անհամապատասխանությունը, սակայն մասնակցի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվել տրանսպորտային միջոցի վարձակալության՝ 25 մարտի 2019թ. թիվ 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետում նշված Ֆրեզ/Բեռնիչ-NEW HOLLAND L225 սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու վարձատուի իրավունքի վերաբերյալ փաստաթուղթը, այլ մասնակցի կողմից լրացուցիչ ներկայացվել է «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 01 մայիսի 2018թ. կնքված տրանսպորտային միջոցի Բեռնիչ Bocat S850.2012թ. վարձակալության պայմանագիրը, որպես տեխնիկական միջոցի նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ:

Մինչդեռ նշված պայմանագրի 1.6 կետով սահմանվում է, որ տրանսպորտային միջոցի տրամադրումը հավաստվում է յուրաքանչյուր ամիս կողմերի միջև կնքված ակտի համաձայն, որը «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատող հանձնաժողովին է ներկայացվել, ինչով կհավաստվեր տեխնիկական միջոցը մասնակցի տիրապետման օգտագործման տակ գտնվելու փաստը՝ որպես տեխնիկական միջոցի /Բեռնիչ Bocat S850.2012թ. նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ:

Բացի այդ, մասնակցի կողմից չի ներկայացվել փաստաթուղթ՝ տրված վարձատուի կողմից առ այն, որ պայմանագիրը գտնվում է գործողության մեջ, քանի որ պայմանագրի

6-րդ մասով սահմանվում է պայմանագիրը միակողմ լուծելու վարձատուի իրավունքը 10 օր առաջ տեղեկացնելով կողմից:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի ապահովվել «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի ներկայացվող պահանջները, որի արդյունքում հայտը գնահատվել է ոչ բավարար և մերժվել:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Կռազ		
Գրեյդեր		
Գլդոն		
Ասֆալտփռիչ		
Ֆռեզ		

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը

բ) իր կողմից հաստատված այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ՝ համաձայն հավելված N 5.1-ի: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է նաև դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

Ընկերությունը հայտնել է, որ շտկում կատարելու փուլում սահմանված ժամկետում, այն է՝ 05.06.2019թ. ժամը 11:58, Ընկերությունը ներկայացվել է «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, մասնավորապես.

1. Շտկված թիվ 5.1 Հավելվածը, որտեղ Հրավերով պահանջված «Ֆրեզ» տեխնիկական միջոցը ներկայացվել է որպես վարձակալության իրավունքով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին պատկանող գույք:

2. 01.05.2019թ. «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիրը, որի համաձայն «Սահակյան Շին» ՍՊԸ-ն պարտավորվում է վարձակալությամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին հանձնել Bobcat S 850 տրանսպորտային միջոցը:

3. «Սահակյան Շին» ՍՊԸ-ին պատկանող նշված տեխնիկական միջոցի՝ Bobcat S 850, թիվ 0001499 տեխնիկական վկայագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, մասնավորապես, «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրում արձանագրվել են երկու անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, որոնք հիմք են հանդիսացել հայտը մերժելու համար:

ա) Պայմանագրի 1.6 կետով սահմանվում է, որ տրանսպորտային միջոցի տրամադրումը հավաստվում է յուրաքանչյուր ամիս կողմերի միջև կնքված ակտի համաձայն, որը «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել, ինչով կհավաստվեր տեխնիկական միջոցը մասնակցի

տիրապետման օգտագործման տակ գտնվելու փաստը՝ որպես տեխնիկական միջոցի /Բեռնիչ Bocat S850.2012թ. նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ: Մինչդեռ ընթացակարգի հրավերը հստակ պահանջում է, որպեսզի մասնակիցը ներկայացնի կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցի նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտա-գործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Ի հավաստում վերոհիշյալ իրավունքի՝ Ընկերությունը ներկայացրել է 01.05.2019թ. «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիրը, որի համաձայն «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն ձեռք է բերել վարձակալության (ժամանակավոր օգտագործման) իրավունք «Սահակյան Շին» ՍՊԸ-ին պատկանող Bobcat S 850 տրանսպորտային միջոցի նկատմամբ: Այսինքն նշված պայմանագրով հաստատվել է մասնակցի մոտ ժամանակավոր օգտագործման իրավունքի առկայությունը: Ինչ վերաբերում է գնահատող հանձնաժողովի այն պնդմանը, թե «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն չի հավաստել այդ տեխնիկական միջոցը իր տիրապետման օգտագործման տակ գտնվելու փաստը, ապա այդ կապակցությամբ հայտնում ենք, որ նման փաստ հավաստելու պարտականություն մասնակիցը չի կրում: Նա ընդամենը Հրավերի պահանջների համապատասխան, պետք է հավաստեր, հաստատեր այտ տեխնիկական միջոցի նկատմամբ իր ժամանակավոր օգտագործման իրավունքի առկայությունը: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ Bobcat S 850 տրանսպորտային միջոցը հրավերի համաձայն՝ մասնակցին անհրաժեշտ է, օգտագործվում է կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում, ուստի և եթե «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում չունենար նշված տեխնիկական միջոցը, այսինքն նշված տեխնիկական միջոցը իր օգտագործման տակ չգտնվեր, ապա միայն այս փուլում պատվիրատուն նշված հիմքով կարող էր լուծել պայմանագիրը:

բ) Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից չի ներկայացվել փաստաթուղթ՝ տրված վարձատուի կողմից առ այն, որ պայմանագիրը գտնվում է գործողության մեջ, քանի որ պայմանագրի 6-րդ մասով սահմանվում է պայմանագիրը

միակողմ լուծելու վարձատուի իրավունքը 10 օր առաջ տեղեկացնելով կողմից: Նշված հիմքով մասնակցի հայտը մերժելը նույնպես իրավաչափ չէ, քանի որ նախ, Հրավերով պահանջվել է ներկայացնել ընդամենը պայմանագիր, և մասնակիցը թե իրավական առումով, թե մարդկային տրամաբանությամբ չի կրում պարտավորություն ապացուցելու, որ նշված պայմանագիրը վաղաժամկետ լուծված չէ:

Ավելին, նշված փաստաթղթերի ուսումնասիրությունը հստակ ապացուցում է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից այս փուլում ներկայացվել են «Ֆրեզ» տեխնիկական միջոցի մասով Հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը, սակայն նման փաստաթղթեր ներկայացնելու պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դուրս գալով ընթացակարգի Հրավերի պահանջներից, կամայականորեն որոշել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն չի համապատասխանում Կարգի 62-րդ կետով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին ներկայացվող պահանջներին՝ այդ հիմքով ոչ իրավաչափ մերժելով Ընկերության հայտը և նախապատվություն տալով ավելի թանկ գնային առաջարկ ներկայացրած մեկ այլ մասնակցին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը գտնում է, որ Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության կողմից Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը՝ գործել է ոչ իրավաչափ, ինչը հանգեցրել են Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 48-րդ կետի և Հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջների խախտմանը:

Ավելին, նման պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից թույլտված ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով Պատվիրատուն ստիպված կլինի կնքել պայմանագիր հաջորդաբար տեղ զբաղեցրած ավելի բարձր գին առաջարկած մասնակից հետ, ինչը էական վնաս կպատճառի համայնքի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.07.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Էջմիածնի համանքապետարանի «Բարեկարգում» տնօրինության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Էջմիածնի համանքապետարանի «Բարեկարգում» տնօրինությունը 04.07.2019թ. թիվ 1845 գրությամբ հայտնել է հետևյալը.

1. Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության կողմից Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձանաժողովի 27.05.2019թ. № 1 արձանագրության համաձայն՝ որպես 1-ին (առաջին) տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և առաջարկվել է ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման որոշման մասին 04.06.2019թ. № 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել էլեկտրոնային եղանակով ծանուցել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին վերջինիս կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերի անհամապատասխանությունների վերաբերյալ և առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ լրացուցիչ ներկայացնելով վարձատու «ԷԴ ՍԹԱՐ» ՍՊԸ-ին պատկանող Ֆրեզ (Բեռնիչ NEW HOLLAND L225) տրանսպորտային միջոցի սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու իրավունքի վերաբերյալ փաստաթուղթը ...:

4. Որպես № 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու կապակցությամբ ներկայացված առաջարկի կատարման ապահովում՝ Ընկերության կողմից 05.06.2019թ.-ին ներկայացվել է 01.05.2018թ.-ին «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև ստորագրված տրանսպորտային միջոցի (Ֆրեզ (Բեռնիչ Bobcat S850,2012թ.)) վարձակալության պայմանագիրը (կցվել է նաև «Սահակյան Շին» ՍՊԸ-ին պատկանող նշված տեխնիկական միջոցի վերաբերյալ թիվ 0001499 տեխնիկական վկայագիրը):

5. Համաձայն 01.05.2018թ. «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրի 1.6 կետի՝ տրանսպորտային միջոցի տրամադրումը հավաստվում է յուրաքանչյուր ամիս կողմերի միջև կնքված ակտի համաձայն: Պայմանագրի 6.1 կետի համաձայն՝ սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերի համաձայնությամբ կամ միակողմանիորեն՝ նրանցից մեկի կողմից սույն պայմանագրում նշված պայմանները խախտելու դեպքում, իսկ 6.2 կետի համաձայն՝ պայմանագրի միակողմանի լուծումը կատարվում է գրավոր, խախտող կողմին այդ մասին 10 օր առաջ տեղեկացնելով:

6. Նշված տրանսպորտային միջոցի (Ֆրեզ (Բեռնիչ Bobcat S850,2012թ.)) տրամադրումը հավաստող կողմերի միջև կնքված որևէ ակտ չի ներկայացվել:

7. Ընթացակարգի գնահատող հանձանաժողովի որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման որոշման մասին 05.06.2019թ. № 3 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունները, այն է՝ վարձատու «ԷԴ ՍԹԱՐ» ՍՊԸ-ին պատկանող Ֆրեզ (Բեռնիչ NEW HOLLAND L225) տրանսպորտային միջոցի սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու իրավունքի վերաբերյալ փաստաթուղթը, որի հիման վրա որոշում է կայացվել ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետի հիմքով մերժել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

8. «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնման ընթացակարգի Հանձնաժողովի 05.06.2019թ. որոշման դեմ (№ 3 արձանագրություն) 12.06.2019թ.-ին ներկայացված բողոքի հիման վրա իրականացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/39 բողոքի քննությամբ 20.06.2019թ.-ին որոշում է կայացվել պարտավորեցնել Գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

9. Հանձնաժողովը, ի կատարումն ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի 20.06.2019թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/39 որոշման պահանջների կատարման, 24.06.2019թ.-ի «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ19/4» ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքերի որոշման մասին № 5 արձանագրությամբ, ընդգծելով, որ մասնակից «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվել տրանսպորտային միջոցի վարձակալության 25.03.2019թ.-ի թիվ 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետում նշված Ֆրեզ/Բեռնիչ NEW HOLLAND L225 տրանսպորտային միջոցի սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու վարձատուի իրավունքի վերաբերյալ փաստաթուղթը, այլ մասնակցի կողմից լրացուցիչ

ներկայացվել է «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.05.2018թ.-ին ստորագրված տրանսպորտային միջոցի (Ֆրեզ (Բեռնիչ Bobcat S850,2012թ.)) վարձակալության պայմանագիրը, մինչդեռ նշված պայմանագրի 1.6 կետի համաձայն չի ներկայացվել տրանսպորտային միջոցը վարձակալին տրամադրելու փաստը հավաստող փոխադարձ ստորագրված ակտը, ինչպես նաև այն, որ համաձայն պայմանագրի 6-րդ գլխի կանոնակարգումների, մասնակցի կողմից Գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել որևէ փաստաթուղթ նշված պայմանագրի գործողության մեջ գտնվելու վերաբերյալ, արձանագրել է, որ մասնակից «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն չի ապահովել ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-ն որոշման 62-րդ կետի 2-րդ ենթակետով և հրավերով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին ներկայացվող պահանջները, արդյունքում իրավաչափորեն որոշում է կայացրել մերժել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4 կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն.

2) տեխնիկական միջոցներ.

3) ֆինանսական միջոցներ.

4) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր տվյալների համապատասխանության ապահովման շրջանակում մասնակիցը, անհրաժեշտության դեպքում կարող է հիմնվել այլ անձանց ֆինանսական և տեխնիկական միջոցների վրա՝ համապատասխան պայմանագրով սահմանված իրավահարաբերության հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 62-րդ կետի համաձայն.

«Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) … .

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:»:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները՝

1. Կռազ, 2. Գրեյդեր, 3. Գլդոն, 4. Ասֆալտփռիչ, 5. Ֆռեզ,

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին,

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

1. Տեխնիկական միջոցի անվանումը,

2. Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը (եթե առկա է) և արտադրության տարեթիվը,

3. Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը,

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը . . . :

Հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.12 ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը հետևյալն են՝

բ) իր կողմից հաստատված այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ՝ համաձայն Հավելված № 5.1-ի: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է նաև դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Որոշման 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի

կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Տվյալ դեպքում, ելնելով վկայակոչված իրավանորմերի և Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջների իրավազորությունից, անհրաժեշտ ենք համարում բողոք քննող անձի ուշադրությունը հրավիրել ինչպես Որոշման 62-րդ կետի 2-րդ ենթակետով, այնպես էլ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնի բ) կետով սահմանված ձևակերպումներին, այն մասով, ըստ որի մասնակիցը պարտականություն է կրում որպես «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի՝ հրավերով սահմանված տեխնիկական միջոցների առկայության վերաբերյալ պահանջները հիմնավորող ապացույցներ ներկայացնել այն տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերը և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերը, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ, և ի ապահովումն նշված պահանջի կատարման Մասնակիցը, որպես «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի՝ հրավերով սահմանված պահանջները հիմնավորող փաստաթուղթ, ներկայացրել է 25.03.2019թ.-ին «ԷԴ ՍԹԱՐ» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված տրանսպորտային միջոցի (Ֆրեզ (Բեռնիչ NEW HOLLAND L225)) վարձակալության 1/Վ/2018 պայմանագիրը, ինչի հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձանաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման որոշման մասին 04.06.2019թ. № 2 արձանագրությամբ, որպես անհամապատասխանություն առաջարկվել է շտկել NEW HOLLAND L225 մակնիշի Բեռնիչի նկատմամբ Մասնակցի օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերում առկա թերությունները: Մինչդեռ վերջինս № 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու պարագայում մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է 01.05.2018 թվականին «Սահակյան Շին» ՍՊԸ-ի հետ ստորագրված տրանսպորտային միջոցի վարձակալության № 1

պայմանագիրը, ինչի կապակցությամբ Գնահատող հանձնաժողովը, ի կատարումն ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի 20.06.2019թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/39 որոշման պահանջների կատարման, 24.06.2019թ.-ի «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ19/4» ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքերի որոշման մասին № 5 արձանագրությամբ, ընդգծելով, որ մասնակից «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվել տրանսպորտային միջոցի վարձակալության 25.03.2019թ.-ի թիվ 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետում նշված Ֆրեզ/Բեռնիչ NEW HOLLAND L225 տրանսպորտային միջոցի սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու վարձատուի իրավունքի վերաբերյալ փաստաթուղթը, այլ մասնակցի կողմից լրացուցիչ ներկայացվել է «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.05.2018թ.-ին ստորագրված տրանսպորտային միջոցի (Ֆրեզ (Բեռնիչ Bobcat S850,2012թ.)) վարձակալության պայմանագիրը, մինչդեռ նշված պայմանագրի 1.6 կետի համաձայն չի ներկայացվել տրանսպորտային միջոցը վարձակալին տրամադրելու փաստը հավաստող փոխադարձ ստորագրված ակտը, ինչպես նաև այն, որ համաձայն պայմանագրի 6-րդ գլխի կանոնակարգումների, մասնակցի կողմից Գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել որևէ փաստաթուղթ նշված պայմանագրի գործողության մեջ գտնվելու վերաբերյալ, արձանագրել է, որ մասնակից «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն չի ապահովել ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-ն որոշման 62-րդ կետի 2-րդ ենթակետով և հրավերով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին ներկայացվող պահանջները, արդյունքում իրավաչափորեն որոշում է կայացրել մերժել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Տվյալ դեպքում, անդրադառնալով «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.05.2018 թվականին ստորագրված տրանսպորտային միջոցի վարձակալության № 1 պայմանագրին՝ որպես «Տեխնիկական միջոց» որակավորման չափանիշի՝ հրավերով սահմանված պահանջները հիմնավորող փաստաթղթի, անհրաժեշտ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում

Օրենսգրքի 645-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց անձնակազմի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրով վարձատուն վճարի դիմաց տրանսպորտային միջոցը հանձնում է վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը՝ առանց նրան կառավարման ու տեխնիկական շահագործման համար ծառայություններ մատուցելու:

Օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն, իսկ 2-րդ մասի համաձայն՝ պայմանագրերի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 18 գլխում նախատեսված երկկողմ և բազմակողմ գործարքների մասին կանոնները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքը համարվում է հետաձգող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների ծագումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրականանա՞, թե՞ ոչ:

Նույն օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

Օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից, իսկ 2-րդ մասի համաձայն՝ եթե օրենքին համապատասխան, պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է նաև հանձնել գույք, պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը հանձնելու պահից (հոդված 177):

Օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի հանձնում է համարվում գույքը ձեռք բերողին, ինչպես նաև ձեռք բերողին առաքելու համար փոխադրողին կամ առանց տեղ հասցնելու պարտավորության օտարված գույքը ձեռք բերողին ուղարկելու համար կապի կազմակերպությանը հանձնելը:

Գույքը ձեռք բերողին հանձնված է համարվում այն ձեռք բերողի կամ նրա նշած անձի փաստացի տիրապետմանն անցնելու պահից:

«Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.05.2018 թվականին ստորագրված տրանսպորտային միջոցի վարձակալության № 1 պայմանագրի 1.6 կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի տրամադրումը հավաստվում է յուրաքանչյուր ամիս կողմերի միջև կնքված ակտի համաձայն:

Տվյալ դեպքում, վկայակոչված իրավանորմերի համադրելի վերլուծությամբ, ինչպես նաև պայմանագրի 1.6 կետի իրավազորությամբ և գործողությամբ, կարելի է արձանագրել, որ սույն պայմանագրի պարագայում պայմանագիրը կնքված կարող է համարվել պայմանագրի առարկա հանդիսացող 2012թ.-ի արտադրության Bobcat S850 մակնիշի Ֆրեզը վարձակալին՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին տրամադրելու պահից, իսկ որպես տրանսպորտային միջոցի տրամադրումը հավաստող փաստաթուղթ պայմանագրով սահմանվել է յուրաքանչյուր ամիս կողմերի միջև կնքված ակտի առկայությունը: Այսինքն, սույն կետով կողմերը, ըստ էության, մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը սահմանել են յուրաքանչյուր ամիս պայմանագրի վերակնքման ձևաչափ՝ տրանսպորտային միջոցի տրամադրման վերաբերյալ փոխադարձ

ակտի ստորագրման կարգ, որպիսի պայմանից էլ, ըստ պայմանագրի, ծագում է կողմերի իրավունքները և պարտականությունները, ինչը տվյալ դեպքում կհավաստի վարձակալության պայմանագրի առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցը վարձակալի տիրապետման տակ գտնվելու հանգամանքը, այն է՝ վարձակալի՝ գույքը տիրապետելու և օգտագործելու իրավունքերի իրացման հնարավորությունները:

Նշվածից հետևում է, որ կողմերի միջև պայմանագրի առարկայի տրամադրման վերաբերյալ յուրաքանչյուր ամսվա համար ստորագրված փոխադարձ ակտի բացակայությունը վկայում է տվյալ ժամանակահատվածում պայմանագրի գործողության դադարման, ինչպես նաև պայմանագրին առարկան վարձակալի հանձնված չլինելու մասին:

Տվյալ դեպքում, անհրաժեշտ է ընդգծել, որ Ընկերության կողմից «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և իր միջև 01.05.2018 թվականին ստորագրված տրանսպորտային միջոցի վարձակալության № 1 պայմանագիրը ներկայացնելիս չի ներկայացվել ինչպես որակավորման փաստաթղթերի ներկայացման ժամանակահատվածում պայմանագրի առարկան Ընկերությանը հանձնված լինելու վերաբերյալ երկկողմ ստորագրված ակտը, այնպես էլ որևէ ժամանակահատվածում այն վերջինիս տիրապետման հանձնված լինելու կողմերի միջև ստորագրված ակտը, ինչը վերոհիշյալ նորմերի իրավազորության պայմաններում թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ չնայած երկկողմ ստորագրված փաստաթղթի, տրանսպորտային միջոցը տրամադրելու վերաբերյալ երկկողմ ստորագրված ակտի բացակայության պարագայում 01.05.2018 թվականին ստորագրված տրանսպորտային միջոցի (2012թ.-ի արտադրության Bobcat S850 մակնիշի Ֆրեզի) վարձակալության № 1 պայմանագիրը համարվում է չկնքված, այսինքն ստորագրված պայմանագիրը դեռևս չի վկայում վարձակալի ստանձնած իրավունքների և պարտականությունների մասին, ուստի նշվածը հիմք է տալիս արձանագրելու, որ «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և իր միջև 01.05.2018 թվականին ստորագրված տրանսպորտային միջոցի վարձակալության № 1 պայմանագիրը Որոշման 62-րդ կետի 2-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնի բ) կետի իմաստով չի կարող դիտարկվել որպես տեխնիկական միջոցի առկայությունը հիմնավորող և ժամանակավոր օգտագործման իրավունքը հավաստող բավարար փաստաթուղթ:

Վերոգրյալի հիման վրա կարելի է փաստել, որ Ընկերության կողմից ներկայացված տվյալ պայմանագրի առկայությունը ինքնին հիմք չէ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը բավարար գնահատելու համար, ուստի այս հիմքով վերջինիս հայտը ենթակա է մերժման:

Բացի այդ, անհրաժեշտ է ընդգծել նաև, որ Ընկերությունը որևէ փաստաթուղթ չի ներկայացրել առ այն, որ նշված վարձակալության պայմանագիրը գտնվում է գործողության մեջ, քանի որ համաձայն 01.05.2018թ. ստորագրված տրանսպորտային միջոցի վարձակալության № 1 պայմանագրի 6.1 կետի՝ սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերի համաձայնությամբ կամ միակողմանիորեն՝ նրանցից մեկի կողմից սույն պայմանագրում նշված պայմանները խախտելու դեպքում, իսկ 6.2 կետի համաձայն՝ պայմանագրի միակողմանի լուծումը կատարվում է գրավոր, խախտող կողմին այդ մասին 10 օր առաջ տեղեկացնելով: Ուստի նշված փաստաթղթի առկայությունը միայն կարող էր վկայել պայմանագրի՝ դեռևս գործողության մեջ գտնվելու մասին:

Ամփոփելով վերոնշյալը՝ պետք է ընդգծել, որ միայն նշված փաստաթղթերի միաժամանակյա առկայության պարագայում հնարավոր կլիներ հրավերով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատել բավարար, մինչդեռ Ընկերության կողմից, 01.05.2018 թվականին ստորագրված տրանսպորտային միջոցի վարձակալության № 1 պայմանագիրը ներկայացնելիս, դրանք չեն ներկայացվել:

Այսպիսով, Ընկերության գործողությունները հանգեցնում են այն հետևության, որ վերջինիս համար սույն պարագայում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելը, մասնավորապես օգտագործվելիք տեխիկական միջոցի նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ ներկայացնելը, ուղղակի կրում է ձևական բնույթ՝ ապահովելու համար գնման գործընթացի ձևական կողմերը, մինչդեռ դրանք չեն կրում ձևական բնույթ, այլ ուղղված են Պատվիրատուի համար երաշխիքներ ապահովելու պայմանագրի կատարման ընթացքում տվյալ տեխնիկական միջոցի առկայությանը և կոնկրետ նպատակով օգտագործելուն և չեն կարող կախման մեջ դրվել այլ անձանց իրավունքներից՝ վտանգելով պայմանագրի կատարման պարտադիր պահանջները, որպիսի պահանջների բավարարման համար

Ընկերության կողմից չեն ներկայացվել համապատասխան, բավարար և պատշաճ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր:

Պատվիրատուն խնդրել է Ընկերության կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.07.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/46 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/46 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Էջմիածնի համանքապետարանի «Բարեկարգում» տնօրինության կողմից Էջմիածնի համանքապետարանի «Բարեկարգում» տնօրինության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.05.2019թ. նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. նիստի թիվ 02 արձանագրության համաձայն՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ կնքվելիք պայմանագրի կատարման տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում «Բեռնիչ-NEW HOLLAMD L225, 2014թ.»-ի

համար իրավունքի տեսակը նշվել է վարձակալություն, սակայն տրանսպորտային միջոցի վարձակալության 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետի նշված է, որ տրանսպորտային միջոցը վարձատուին պատկանում է սեփականության իրավունքով: Սակայն չի ներկայացվել վարձատուին պատկանող «Ֆրեզ/Բեռնիչ NEW HOLLAND L225» սեփականության վկայագիրը: Միևնույն ժամանակ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից նշված տեխնիկական միջոցի վերաբերյալ ներկայացվել է թիվ 0001558 տեխնիկական վկայագիրը, ըստ որի, որպես սեփականատեր նշված է «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՓԲԸ-ն:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. նիստի թիվ 03 արձանագրության 1.1-ին կետի համաձայն՝ Ընկերության կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվել տրանսպորտային միջոցի՝ վարձակալության 25 մարտի 2019թ. Թիվ 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետում նշված Ֆրեզ/Բեռնիչ NEW HOLLAND L225 սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու իրավունքի վերաբերյալ փաստաթուղթը՝ չապահովելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 62-րդ կետով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին ներկայացվող պահանջները:

Նույն արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 20.06.2019թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/39 որոշմամբ «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցվել է դադարեցնել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2019թ. նիստի թիվ 05 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 28.06.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, Էջմիածնի համանքապետարանի «Բարեկարգում» տնօրինության 04.07.2019թ. թիվ 1845 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով

նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող տեխնիկական միջոցներ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը

հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 62-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ

որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) …

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Էջմիածնի համանքապետարանի «Բարեկարգում» տնօրինության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ ենթակետի 2.5 պարբերությամբ սահմանվել է հետևյալը.

«Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Կռազ		
Գրեյդեր		
Գլդոն		
Ասֆալտփռիչ		
Ֆռեզ		

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ

ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը
1			
2			

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետի «բ» պարբերությամբ սահմանվել է, որ սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ՝ համաձայն հավելված N 5.1-ի: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է նաև դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.05.2019թ. նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. նիստի թիվ 02 արձանագրության համաձայն՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ կնքվելիք պայմանագրի կատարման տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում «Բեռնիչ-NEW HOLLAMD L225, 2014թ.»-ի համար իրավունքի տեսակը նշվել է վարձակալություն, սակայն տրանսպորտային միջոցի վարձակալության 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետի նշված է, որ տրանսպորտային միջոցը վարձատուին պատկանում է սեփականության իրավունքով: Սակայն չի ներկայացվել վարձատուին պատկանող «Ֆրեզ/Բեռնիչ NEW HOLLAND L225» սեփականության վկայագիրը: Միևնույն ժամանակ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից նշված տեխնիկական միջոցի վերաբերյալ ներկայացվել է թիվ 0001558 տեխնիկական վկայագիրը, ըստ որի, որպես սեփականատեր նշված է «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՓԲԸ-ն:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. նիստի թիվ 03 արձանագրության 1.1-ին կետի համաձայն՝ Ընկերության կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվել տրանսպորտային միջոցի՝ վարձակալության 25 մարտի 2019թ. Թիվ 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետում նշված Ֆրեզ/Բեռնիչ NEW HOLLAND L225 սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու իրավունքի վերաբերյալ փաստաթուղթը՝ չապահովելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 62-րդ կետով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին ներկայացվող պահանջները:

Նույն արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 20.06.2019թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/39 որոշմամբ «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցվել է դադարեցնել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2019թ. նիստի թիվ 05 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ»

ՍՊԸ-ի հայտը՝ այն հիմնավորմամբ, որ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին. մասնավորապես՝ Ընկերության կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվել տրանսպորտային միջոցի վարձակալության 25.03.2019թ. թիվ /Վ/2018 պայմանագրի 1.4 կետում նշված «Ֆրեզ/Բեռնիչ NEW HOLLAND L225» սեփականության վկայագիրը կամ գույքն ենթավարձակալությամբ տրամադրելու վարձատուի իրավունքի վերաբերյալ փաստաթուղթը, այլ Ընկերության կողմից լրացուցիչ ներկայացվել է «Սահակյան Շին» ՍՊԸ-ի և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.05.2018թ. կնքված տրանսպորտային միջոցի /բեռնիչ Bobcat S850, 2012թ./ վարձակալության պայմանագիրը, որպես տեխնիկական միջոցի նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ: Մինչդեռ նշված պայմանագրի 1.6 կետով սահմանվում է, որ տրանսպորտային միջոցի տրամադրումը հավաստվում է յուրաքանչյուր ամիս կողմերի միջև կնքված ակտի համաձայն, որը «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման հանձնաժողովին չի ներկայացվել, ինչով կհավաստվեր տեխնիկական միջոցը Ընկերության տիրապետման կամ օգտագործման տակ գտնվելու փաստը՝ որպես տեխնիկական միջոցի /բեռնիչ Bobcat S850, 2012թ./ նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից չի ներկայացվել փաստաթուղթ, տրված վարձատուի կողմից առ այն, որ պայմանագիրը գտնվում է գործողության մեջ, քանի որ պայմանագրի 6-րդ մասով սահմանվում է պայմանագիրը միակողմ լուծելու վարձատուի իրավունքը՝ 10 օր առաջ տեղեկացնելով կողմին:

Այսպիսով՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից, «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացրել է «ԷԴ ՍԹԱՐ» ՍՊԸ-ի և Ընկերության միջև 25.03.2019թ. կնքված New HOLLand L225 2014թ. տրանսպորտային միջոցի վարձակալության թիվ 1/Վ/2018 պայմանագիրը:

Ընկերության կողմից ներկայացված հայտի թիվ 5.1 հավելվածում՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների (սարքերի, սարքավորումների) մասին տեղեկանքում, «Ֆռեզ» տեխնիկական միջոցի մակնիշը,

պետհամարանիշը (եթե առկա է) և արտադրության տարեթիվը լրացվել է «Բեռնիչ-NEW HOLLAND L225, 2014թ.», իսկ տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը նշվել է վարձակալություն:

Գնահատող հանձնաժողովն Ընկերության կողմից «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված վերոհիշյալ պայմանագրի մասով արձանագրել է անհամապատասխանություն, մասավորապես՝ պայմանագրի կատարման տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում «Բեռնիչ-NEW HOLLAMD L225, 2014թ.»-ի համար իրավունքի տեսակը նշվել է վարձակալություն, սակայն տրանսպորտային միջոցի վարձակալության 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետի նշված է, որ տրանսպորտային միջոցը վարձատուին պատկանում է սեփականության իրավունքով: Սակայն չի ներկայացվել վարձատուին պատկանող «Ֆրեզ/Բեռնիչ NEW HOLLAND L225» սեփականության վկայագիրը: Միևնույն ժամանակ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից նշված տեխնիկական միջոցի վերաբերյալ ներկայացվել է թիվ 0001558 տեխնիկական վկայագիրը, ըստ որի, որպես սեփականատեր նշված է «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՓԲԸ-ն:

Արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցվելուց հետո Ընկերության կողմից ներկայացվել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և «Սահակյան Շին» ՍՊԸ-ի միջև 01.05.2018թ. կնքված Bobcat S850 տրանսպորտային միջոցի վարձակալության N 1 պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր), ինչպես նաև հայտի թիվ 5.1 հավելվածի շտկված տարբերակը, որում ««Ֆռեզ» Բեռնիչ-NEW HOLLAND L225, 2014թ.» փոխարեն՝ համաձայն «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի շտկված տարբերակ ներկայացված պայմանագրի՝ նշվել է ««Ֆռեզ»Բեռնիչ-Bobcat S850, 2012թ.»:

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը մերժելու որոշման մեջ նշել է, որ Պայմանագրի 1.6 կետով սահմանվում է, որ տրանսպորտային միջոցի տրամադրումը հավաստվում է յուրաքանչյուր ամիս կողմերի միջև կնքված ակտի համաձայն, որը «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման հանձնաժողովին չի ներկայացվել, ինչով կհավաստվեր տեխնիկական միջոցը Ընկերության տիրապետման կամ օգտագործման տակ գտնվելու փաստը՝ որպես

տեխնիկական միջոցի /բեռնիչ Bobcat S850, 2012թ./ նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ:

Այս տեսանկյունից հայտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

Օրենսգրքի 610-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող տեխնիկական միջոցներ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար **պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:**

Հրավերով սահմանվել է, որ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորելու համար մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ **ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:**

Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և «Սահակյան Շին» ՍՊԸ-ի միջև 01.05.2018թ. կնքված Bobcat S850 տրանսպորտային միջոցի վարձակալության N 1 պայմանագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Սահակյան Շին» ՍՊԸ-ն վճարի դիմաց Ընկերության ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում պայմանագրի 1.2 կետում նշված տրանսպորտային միջոցը /Bobcat S850/, իր ուժերով ծառայություններ է մատուցում դրանց կառավարման և տեխնիկական շահագործման համար, իսկ վարձակալն ընդունում է նշված տրանսպորտային միջոցը և վճարում վարձավճարը:

Տվյալ դեպքում գտնում եմ, որ Ընկերությունը սույն մասով ապահովել է Ընթացակարգի հրավերի վերոհիշյալ պահանջը և ներկայացրել է կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա **տեխնիկական միջոցի ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթուղթը՝ սահմանված կարգով կնքված վարձակալության պայմանագիրը, որի համաձայն «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն տիրապետման և օգտագործման իրավունքով վարձակալել է բեռնիչ /Bobcat S850 տրանսպորտային միջոցը:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն Ընկերության հայտը մերժելու որոշման մեջ նշել է, որ Ընկերության կողմից չի ներկայացվել փաստաթուղթ՝ տրված վարձատուի կողմից առ այն, որ պայմանագիրը գտնվում է գործողության մեջ, քանի որ պայմանագրի 6-րդ մասով սահմանվում է պայմանագիրը միակողմ լուծելու վարձատուի իրավունքը՝ 10 օր առաջ տեղեկացնելով կողմին:

Այսպես՝ Պայմանագրի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է 01.05.2018 թվականից մինչև 31.12.2019թ.:

Նույն Պայմանագրի 6-րդ կետի 6.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը կարող է լուծվել կողմերի համաձայնությամբ կամ միակողմանիորեն՝ նրանցից մեկի կողմից սույն պայմանագրում նշված պայմանները խախտելու դեպքում:

Օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

Օրենսգրքի 612-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը կնքվում է պայմանագրով որոշված ժամկետով:

Տվյալ դեպքում Ընկերության կողմից ներկայացվել է 01.05.2018 թվականին կնքված տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր, որի գործողության ժամկետը սահմանվել է մինչև **31.12.2019թ.:**

Ինչ վերաբերում է գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչված այն փաստին, թե արդյոք պայմանագիրը գտնվում է գործողության մեջ, թե ոչ, ապա Կարգի 67-րդ կետը նախատեսում է, որ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությունից Պայմանագրի գործողության մեջ գտնվելու վերաբերյալ վարձատուի կողմից տրամադրված փաստաթուղթ ներկայացնելու պահանջ ներկայացնելը չի կարող դիտարկվել որպես հրավերի պահանջներից բխող, քանի որ հրավերով չի սահմանվել նման փաստաթուղթ ներկայացնելու մասնակցի պարտականությունը, ինչպես նաև ներկայացված Պայմանագրով սահմանված ժամկետն արդեն իսկ թույլ տալիս առաջնորդվել Պայմանագրի՝ գործողության մեջ լինելու կանխավարկածով:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ վերոհիշյալ հիմքերով մերժելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը, գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, ուստի գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 28.06.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**